

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Սերտիւ կապուած է ձեռնադրութեան խնդրոյն հետ՝ զոր տեսանք ընդարձակութեն, և անոր զուռն է հայրապետական ընտրութիւնը, կ'արժէ ուրեմն՝ որ առանձին ուշադրութիւն դարձնենք նաև այս հարցին, որ իսկապէս հետաքրքրական է իւր զանազան դրուագներով:

Ա. Ընդհ. Եկեղեցւոյ մէջ: — Որովհետև այն ըըջանին, ուր ազգովին կապուած էինք տեղեկեարկան Եկեղեցւոյ հետ, կրօնական բոլոր խնդրոց մէջ հասարակօրէն հաւասար կ'ընթանայինք ամենուրեք հետ, հարկ է՝ որ վեր ելնենք նախ մինչև ըրիստոնէութեան սկիզբը, և տեսնենք՝ ինչպէս էր ընտրութեան եղանակն առաքելական և անոր յաջորդող դարերու մէջ, և ապա համեմատենք անոր հետ հայկականը:

1. Մատնիչ Յուդայի կորստեամբ՝ պէտք էր նշանակել անոր փոխանորդն առաքելական խմբին մէջ: Աղբոր համար հաւաքուած էին ի միասին առաքեալը և միւս եղբարք, ժողով մը «հարիւր և քսանից», որոց առջև կանգնեցաւ առաքելոց զլուսիւր Պետրոս, և առաջարկեց ընտրել մին աւնոցմէ՝ որոնք Յիսուսի քարոզութեան ամբողջ ըըջանին անոր ականատես և երկօտասանից կենակից եղած էին: Աղոցմէ յառաջ կոչեցին երկու հոգի, Յովսէփ ու Մատթիա. աղօթեցին՝ որ Աստուած յայտնէ անոցմէ ուզածը, յետոյ «ետուն վիճակա նոցա, և ելանէր վիճակն Մատթեայ, և համարեցաւ ընդ մետասան առաքեալան»¹: Ուրեմն այդ տեղ՝ ըրիստոնէութեան խանձարոց մէջ՝ ընտարական ձևն ընդհանրական է արդէն, կը կատարուի գործակցութեամբ եկեղեցւոյ առաջնորդաց ու հաւատացելոց: Մակայն հոգ խնդիրը կը դառնար քարձր պաշտօնատարի կամ

առաքելոյ մը շուրջ, որ կը համեմատի եպիսկոպոսին: Իսկ երբ եկան ստորնաւ զոյն պաշտօնէից՝ եօթն սարկաւազաց ընտրութեան, առաքեալը զայն թողուցին «աշակերտաց բազմութեան», ըսելով. «Ընտրեցէք, եղբարք, վկայեալս ի ձէնջ արս եօթն»: Այդպէս ալ ըրին, և տարին «կացուցին առաջի առաքելոցն», որոնք աղօթեցին ու ձեռնադրեցին զանոնք²: Այս էր տարբերութիւնն երկու դասակարգելու ընտրութեան մէջ:

Կ'անցնինք ուրիշ պատմական օրինակաց, որոց մէջ դարձեալ պահուած կը գտնենք հաւաքական ընտրութեան եղանակը՝ թէ եպիսկոպոսաց և թէ մետրօպոլիտաց համար, որով խառն ալ պիտի նկատենք զանոնք: Յակրոս տեսնեցոր մասին կը պատմէ Եւսեբիոս՝ թէ «ընկալաւ յառաքելոց անտի զաթոռ եպիսկոպոսութեան Երուսաղեմի»³: Անոր յաջորդին համար «ասի բան», կը գրէ նոյն պատմիչը, թէ «առաքեալն և աշակերտք տեսան մերոյ՝ որ մնացեալը էին ի ժամանակին, ժողովեցան ի միասին յամենայն կողմանց, հանդերձ ազգականօք տեսան մերոյ՝ որ ըստ մարմնոյ . . . և արարին խորհուրդ . . . և ամենեքեան միաբան միով խորհրդով հաւանեցան» ընտրութեան Շմաւոնի կղզեպանաց⁴: Պողիկարպոս կենակից առաքելոց, «ի ձեռնադրութենէ նոցա ընկալաւ նա զեպիսկոպոսութիւն զմիւսնացուց եկեղեցւոյն»⁵: Նոյն քաղաքին ծերունի Նարկիսոս եպիսկոպոսին օգնական կ'ընտրուի Ալեքսան-

1. Գրք. Ա, 15-26. — 2. Անդ՝ 2, 2-6. — 3. Եւսեբ. Պատմ. եկ. Բ, 19. — 4. Անդ՝ Գ. Ժա. — 5. Անդ, Գ, 19.

գրոս՝ «միաբան հաւանութեամբ սահմանակից եպիսկոպոսացն»։ Հոռոմայ փառքանոս հայրապետի ընտրութեան համար «ժողովեալ էին եղբարք ի միասին յեկեղեցւոյն»։ Անոնց մէջ էր և փարիանոս, պարզ հաւատացեալ մը, ազարակէն նոր դարձած, որոյ վրայ կ'ըսուէր՝ թէ հոն խորհրդական աղանձի մ'է եկեր կանգնեւ, — ինչպէս յետոյ պիտի պատմուի նաև ս. Բարսղի ու մերս Ներսիսի մասին. — և զրեղ այն տեսիլ ըարժեալ ժողովուրդն առ հասարակ», միաբերան կ'աղաղակեն՝ թէ «Արժանի է դա. և վաղվաղակի առեալ զնա՝ նստուցին յաթոռ եպիսկոպոսութեան»։ Կոս յայտնապէս իսկ կը տեսնուի եպիսկոպոսաց ու ժողովրդեան գործակցութիւնը։ Եւ այս բոլոր օրինակները կը վերաբերին Ա-Գ դարերուն, թէպէտ պատմիչը կը գրէր 326ին։ Խնդրոյս հնազոյն վկայ մը, ս. Կղեմէս Հոռոմայ, առ Կոլընթացիս Ա թղթին մէջ, գրուած Ա դարու վերջերը, կ'ըսէ՝ թէ առաքեալը այնպէս սահմանեցին՝ որ եպիսկոպոսն ընտրուի եպիսկոպոսաց ժողովէն. և «ամինայն եկեղեցին հաւանեացի»։ Եւ այսինքն տեղեւոյն ըրիս. առնեալ հասարակութիւնը։ Աստի չի տար. բերիւր իսկութեամբ վկայութիւնը ս. Կիրիլիանոսի, վախճանեալ 258ին, թէ «յասարուածային տուչութենէ և յառաքելական պահպանութենէ խնամով պահեալ կայ, ... զի վասն ըստ օրինի կատարելոյ զձեռնադրութիւնս, առ ամբոխին՝ որում առաջնորդն ձեռնադրի, զուսարեացին եպիսկոպոսը մերձաւորը այնր գաւառի, և ընտրեացի եպիսկոպոսն առաջի ամբոխին», ընելով անոր կեանքն ու գործերը։ Նոյնպէս կատարուեւ էր Լեզիոնացւոց Սարիւնոս եպիսկոպոսի ընտրութիւնն ալ, «հասարակութեամբ բովանդակ եղբարայութեանն, և դատաստանաւ եպիսկոպոսաց՝ որ այժմս ժողովեալ էին, որք և թուղթս առաքեցին առ ձեզ զնմանէ, և եսուն նմա զեպիսկոպոսութիւնն, և ձեռնադրեցին զնա փոխանակ Բասիլիդեայ»։ Այս ձեռն էր ուրեմն՝ որ ի գործ կը դրուէր ամենուրեք։

2. Սակայն Եկեղեցւոյ առաջնորդը եր-

թալով տեսան՝ որ ամբոխին մասնակցութիւնը միշտ օգտակար արդիւնքներ չէր տար. զի ժողովուրդն ի վիճակի չէր միշտ կշռելու ընտրելոյն արժանաւորութիւնը։ Այս պատճառաւ Նիկիոյ ժողովը (325ին) փորձեց վերապահել ընտրութիւններն եպիսկոպոսաց դասուն, սահմանելով այսպէս. «ի դէպ է յոյժ արդարեւ՝ զի եպիսկոպոս կարգեացի յամենեցուն (եպիսկոպոսաց) որ են ի գաւառին։ Այլ թէ դժուարին իցէ այն վասն կարեւոր ինչ հարկի կամ հեռաւորութեան ճանապարհին, երեք եւթ ի նմին տեղւոյ զուսարեալը, և բերեալ զհաւանութիւն և զթուղթս ի բացեալ եղեւոցն, այնպէս կատարեացեն զընտրութիւնն, և ընդ նմին զհաստատութիւնն ընկալցին ի մետրոպոլիտէ գաւառին» (կան. Գ)։ Ինչպէս կը տեսնենք, լոկ եպիսկոպոսաց թողովով ընտրութիւնը, լուեկայն կը մերժէր ժողովրդեան մասնակցութիւնը։ Նոյն սահմանը՝ նոյն ծածուկ լեզուով՝ կրկնեցին նաև Անտիոքայ ժողովն 341ին (կան. Ժր), Սարդիկեայն՝ 343ին (կան. Գ), և Լաւողիկեայն՝ 381ին (կան. Ժր)։ Իսկ վերջին ժողովս ուղեց աւելի յստակ ալ խօսիլ, և ըսաւ. «Չէ արժան թողուլ ամբոխին զընտրութիւն այնոցիկ՝ որ կոչեցեալ են ի քահանայութիւն» (կան. Ժգ)։ Բայց այդ վճիռները միացին ձայն բարբառոյ յանապատի, և ընտրութեան հին եղանակը շարունակուեցաւ Եկեղեցւոյ մէջ, կ'ըսէ և կը ցուցնէ օրինակներով Վան Եսպէն՝։

3. Նորոյթ մ'եղաւ աշխարհական իշխանութեան միջամտութիւնն ընտրութեանց, երբ 338ին Կոստանդ կայսրն աթոռագորկ ըրաւ անձամբ Կոստանդնուպոլսի «Պողոս արքեպիսկոպոսը, և անոր տեղ նշանակեց Նիկիոմիդիոյ եպիսկոպոսն Եւսեբիոս»։ Եւ ս. Աթանասի աքսորանաց առթիւ՝ Աղեքսանդրիոյ աթոռին վրայ յա-

1. Եւ. 2, 4, — 2. Անդ՝ 2, ԻԲ. — 3. Patr. Graeca, I, 297. — 4. Patr. Lat. III, 1064, — 5. Զմտ. Vacant, Dict. Theol. IV, 1258. — 6. Սկրտ., Բ, 4-է։

ջորդարար նստեցուց իւր դրան երկոցունքը՝ Գրիգոր ու Գէորգ, որոյ ղէմ բողոքեց Աթանաս իւր արդար լեզուով։ Նաև Թէոդոս Բ՝ Պրոկղի ընտրութեան ժամանակ ծագած անհամաձայնութեանց առթիւ՝ իւրովի ուստանին առաջնորդ կարգեց զԻսատորիոս՝ Նոյնը պատահեցաւ և ի Հոռոմ, ուր 418 ին առաջին անգամ Ունորիոս կայսրը թիկունք կանգնեցաւ հակառակաթոռ Եւլալիոսի, և հրամայեց աքսորել օրինաւոր հայրապետը Բոնիփակիոսին Թեոդոս երկուցն ալ իւր մօտ կոչեց՝ դատելու համար, արտաքսեց հակապապը, և զԻստորիոս հաստատեց աթոռին վրայ։ Այնուհետև կը շարունակեն ու կը բազմանան միջամտութիւնը Պետրոսի յաջորդաց ընտրութեանց մէջ՝ Այս ոտնձգութեանց ղէմ վճռեց Նիկիոյ Բ տիեզերական ժողովը 787 ին՝ իւր Գ կանոնով, եպիսկոպոսաց ժողովոյն վերապահելով եպիսկոպոսներն ընտրելու իրաւունքը, առանց միջամտութեան աշխարհիկ իշխանութեանց։ Նոյն պայքարը շարունակեց Եկեղեցին նաև յետոյ՝ աւելի կամ նուազ յաջողութեամբ։ Բայց մեզ այսչափը բաւական համարինք։

Ամփոփելով, Եկեղեցւոյ սկիզբէն՝ եպիսկոպոսական ընտրութեանց մասնակցեր են, ա՛ զաւառին եպիսկոպոսները, ք՝ ընտրելոյն վիճակին ժողովուրդը, ց՝ աւելի ուշ քաղաքական իշխանութիւնն ևս, մերթ յարգելով ու մերթ անտեսելով բուն ընտրողաց իրաւունքը։ Այժմ անցնինք սես նի խնդիրը հայ եկեղեցւոյ մէջ։

Բ. Արշակունեաց շրջան — 1. Բոլորովին տարբեր հանգամանօք կը ներկայանայ հարցը մեր քով, ուր ընտրութիւնը սկսան վերոյիշեալ չորս ժողովոց սեղամօններէն յառաջ, յանձին Լուսաւորչին՝ մեր առաջին հայրապետին։ Հոգ հայ ազգը դեռ նոր կը դառնար քրիստոնէութեան, և ոչ մի եպիսկոպոս չունէր տակաւին։ Հարկ էր ընտրել առաջին կաթողիկոսը։ Տրդատ արքայ՝ իւր կնոջ ու քրոջ հետ հրաման կու տայ և ի վաղարշապատ կը հաւաքուին «զօրքն ամենայն»։ այսինքն

«մեծամեծք և կուսակալը, գաւառակալը, պատուաւորը, պատուականը, զօրավարը, պետը և իշխանը, նախարարը և ազատը, դատաւորը և զօրագլուխը», որոնք բոլորը միանգամայն զինուորական էին, Հոն «խորհուրդ ի մէջ առնելով թագաւորն ընդ ամենեանն», և կ'առաջարկէ «զԳրիգոր հովիւ կացուցանել», որուն կը հաւանին ամէնքը՝, Հիմ կը դրուի հոգ տգնոտակաւ տակաւ ընտրութեան մը, որ կանոն կը դառնայ յաջորդ ընտրութեանց ևս։ Սոփորաբար աւագանին է արքային հետ, և մերթ վերջինը միայն, — որոյ ձայնն անպակաս ու զօրագոյն է միշտ, — որ կ'ընտրեն հայրապետը, սկսելով արեւմտեան կայսերաց ոտնձգութենէն ալ կանոնիս։

Լուսաւորչի յոգնած պաշտօնին ծանրութենէն, անապատները կը փախչի։ Տրդատ դարման մը կը խորհի այդ վիճակին։ Երեք իշխան կը յղէ և Յունաց կողմերէն բերել կու տայ անոր երկու որդիքը, կը տանի իրենց հօրը քով, և կը խնդրէ՝ որ «ձեռնարեացէ տացէ նմա եպիսկոպոս» զԱրիստակէս, «զոր ձեռնարեաց յեպիսկոպոսութիւն փոխանակ իւր», այս ինչէն փոխանորդ կամ «զործաւից եպիսկոպոսակից», որուն և կը յաջորդէ յետ անոր մահուան։

Տիրան արքայ երբ սպանեց զՅուսիկ, «միաժողով եղեալ մեծամեծք նախարարացն, և ի մի վայր եկեալք, խորհուրդ խորհեցան, հաւանեցուցին զԹագաւորն»՝ ձերբունի Դանիէլ եպիսկոպոսին տալ աթոռ։ Չորս նախարարք գնացին բերին զայն ժողովին առջև, և նա այնպիսի կշտամբութիւն մը տեղաց անոնց վրայ, որ փոխանակ աթոռին՝ Հոն իսկ ժողովին մէջ ստացաւ իւր խեղդամահ վախճանն ամբարիշտ արքայէն։ Թետոյ զՓառէն երեց «համարեցան արժանի» կաթողիկոսութեան, և «կոչեցին զնա առ արքայն», որ զայն յղեց ձեռնադրուելու ի կեսաւ

1. Սփրատ Է, Խ. — 2. 2-րդ Vacant, IV, 2291-2310. — 3. Աղաթանգեղոս, Վննեթիկ, 1862, 594-96. — 4. Նոյն՝ 641-42. Փաւստոս, Վննեթիկ, 1892, 6. — 5. Փաւս. 38-42.

րիսի՝ Շահակայ ընտրութեան համար նոյնպէս Վարդան խորհեցան աշխարհօրէն խորհուրդ՝ ։

Նոյնը պատահեցաւ նաև մեծին Ներսիսի՝ «ի մի ժողով կուտեցան առ արքայն Արշակ մեծամեծը նահապետը ազգաց ազգաց, տեհմաց տոհմաց, զնոյից և զորոշուց տեարք, ամենայն սատարացը, նախարարը և ազատը, պետը և իշխանը, զօրավարը և սահմանապահը, ի մի հաւանութիւն միաբանական խորհուրդ, զի եկեղեցին տեսցեն և խորհեցին վասն իւրեանց առաջնորդի»։ Հոն արքային քով կանգնած էր իւր սենեակպետը, հազած աշտուական գեղեցիկ պատմունճանը, և քրու նած անոր ականազարդ կամարն ու ոսկեպատեքն սուրը։ Ներսէս էր նա, ս. Յուսէպի թոռը, որոյ ի տես ճառ հասարակ ատեանն զբողոք բարձեալ ազադակէին՝ եթէ Ներսէս լիցի մեր հովիւ»։ Սաստիկ ընդդիմացաւ նա՝ իբր անարժան այդ պատուին, և պատմելով իւր չգործած մեղքերը, որոց ի լուր բոլորը կը մարէին ինչպէս։ Ստիպուեցաւ փոխել լեզուն և կշտամբել ազգին չարութիւնները, թաղաւորին ծիծաղը բարկութեան փոխուեցաւ։ Կամարն ու սուրը յափշտակեց անոր ձեռքէն՝ հրամայեց՝ ու կապեցին զայն, մագերէ խուզեցին, պատմունճանը պատռեցին հանեցին ու կղերական զգեստ հագուցին. ապա կոչեցին Փաւստոս եպիսկոպոսը, որ զայն սարկաւազ ձեռնադրեց, Ներսէս սեղծ՝ կը հնազանդէր մեքենաբար։ Հայրապետական ընտրութիւնը կատարուած էր՝ ։

Փնելի անիրաւ յայնման համար Ներսէս գտնեցաւ Արշակայ հետ, որ զայն շնորհազուրկ հոչակեց, և «կացուցին փոխանակ նորա գլուխ քրիստոնէութեանն» զՊունակ՝. ուր կացուցին՝ կ'ենթադրէ հաւաքական ձեռք Յետոյ Պապ սպանեց ըզ-Ներսէս, անոր փոխան ինքն իսկ «կացոյց» Յուսիկ եպիսկոպոսը, և «եստ հրաման ունել նմա զտեղի հայրապետացն»։ Իսկ յետ Ասպուրակի՝ «ի տեղի նորա յաւորդէ թորով զլիսահակ՝ որդի մեծին Ներ-

սիսի»։ Վկայն հեռաւոր և ընտրութեան կերպի անստոյգ։

Սյապէս ուրեմն մեր այդ չորրորդական բնական ընտրութեանց ու փոփոխութեանց մէջ հայ եպիսկոպոսունք — ինչպէս ժողովուրդն ալ — որ և է մասնակցութիւն չունին։ Յետ Ներսիսի ընտրութեան է՝ որ կը կոչուի Փաւստոս եպոս, ձեռնադրելու զայն։ Նոյնպէս Արշակ ըզ-Պունակ ընտրելէն վերջ հրաւրեց հայ եպիսկոպոսունքն անոր ձեռնադրութեան, Մեր ազնուականութեան այդ վարմունքը, հակառակ կաթողիկէ եկեղեցւոյ սահմանաց, արդիւնք էր անշուշտ մեր կէս հեթանոս բարբերուն, որ կ'ընթերցէր զեռ այդ դարուն, և հեռի կը պահէին աւազանին եկեղեցական օրինաց ծանօթութենէն ու պատշաճ մեծարանքէն ։

2. Եթէ հայ կղերն արհամարհուած էր, և անտեսուած իւր կանոնական իրաւունքն ընտրութեանց մէջ, սակայն կար կենաւ, ըրոյ աթոռը, որ Լուսաւորչէն ց'երեսէս և անդրազոյն ևս՝ գերագահութիւն մը կը պահէր օրինօք ու գործնականապէս ալ մեր հայրապետութեան վրայ, հաստատուած դաշմար. և ուր յետ ընտրութեան կ'երթային մեր կաթողիկոսունք՝ հաւանութիւն ու ձեռնադրութիւն ստանալու։ Այնքան զօրաւոր էր այդ կապը, որ երբ Պապ ինքնազլխաբար զՅուսիկ զրաւ Ներսիսի աթոռին վրայ, կեսաբիւրջ արքեպիսկոպոսը ս. Բարսեղ՝ զրկեց զայն եպիսկոպոս ձեռնադրելու իրաւունքէն, ըստ որում «առանց նորա հրամանի եղեալ» էր կաթողիկոս՝ ։ Տղայական էին մեր վերջին բանասիրաց սմանց կենսաբիւրջ այդ իրաւունքն ուրանալու արուեստական ճիգերը, զորս առիթ ունեցաւ ջրելու՝ յաւերժաբար՝ ներքին և արտաքին փաստերու տաւրափով մը, պատմութեան այդ և ապագայ թշնամեաց առջև փակելով փախստեան ամէն դուռ ։

1. Փաւս. 44. — 2. Նոյն՝ 55. — 3. Նոյն՝ 67-70. — 4. Նոյն՝ 123. — 5. Նոյն՝ 226. — 6. Խորեն. Գ. խթ. — 7. Փաւս. 123. — 8. Նոյն՝ 226. — 9. Կաթողիկոս Խաչերեան, 182-223.

Մեծահանգէս ու հետաքրքրիչ եղեր է միշտ երբն ու դարձն ի կենսարիւմ նորընտրի հայրապետին, որ յաչս ազգիւս կը նկատուէր «այր մեծ և պատուական, զըլուխ և վարդապետ, առաջնորդ աշխարհի և թագաւորութեան միոջ», և Հայոց արքային հետ «ընդ մի համար»։ Լուսաւորչին կ'ընկերէին տաճնուվեց երևելի իշխաններ, նշանակուած տոհմային անուններով, իրենց «կառօց և երվարօց, զօրօց, նշանակօց, իւրաքանչիւր գնդօց»։ Եւ զինքը նստուցին «յոսկիապատ կառան արքունականս», որուն լծուած էին նոյն կառաց յատուկ սպիտակ ջորիներու կը տանէին նաև վկայական թուղթ մը Տրդատայ և Հայոց կողմանէ, և թանկագին պարգեւներ կ'ապագողվկիոյ վիճակին եկեղեցեաց համար։ Ի դարձին՝ արքայն «առեալ զզօրս իւր», թագուհւոյն և քրոջը հետ ընդ առաջ գնաց հայրապետին մինչև Եփրատայ ափունքը, ցնծութեամբ հանդիպեցաւ անոր, և ընդունեցաւ կենարիոյ մետրոպոլիտին ընծայական թուղթը։ Այս կրկնակ թղթերը՝ խնդրողու ու ձեռնադրողին կողմանէ՝ սովորական էին եպիսկոպոսաց ձեռնադրութեան առթիւ։

Տիրան արքայ ս. Յուսկան ուղեկից տուաւ նոյնպէս «զմեծամեծ նախարարսն ըստ սովորութեան օրինակին», որ էին տասներեք հոգի՝ նշանակուած յանուանէ. և ընտրեալը բազմեցուցին դարձեալ «յարքունական կառան»։ Ի դարձին՝ թագաւորն «ամենայն բանակօքն բազմութեամբ» գնաց ընդունել զայն, և տարին «նստուցանէին զցանկալի մանուկն Յուսկի յաթոռ հայրապետական»։ Աշտիշատու կաթողիկէին մէջ՝ Փառէն ձեռնադրուելու գնաց «պատարագօց և հրովարտակօց և ճոխ իշխանօքն», տասներկու հոգի։ Եւ հակ' տասներկու իշխաններով և «մեծաշուք պատուով»։ Եւ Ներսիսի հետ կաշին ութ երևելի նախարար, «բազում ընծայիւք և մեծամեծ պատարագօց և հաւատարիմ հրովարտակօց»։ Ի դարձին՝ Արշակ գնաց մինչև Աործ լեռը, ուր հանդիպեցան իրարու «մեծաւ լըջութեամբ,

լցեալը օրհնութեամբ ողջունին»։ և դարձան ոստանը՝։

Գ. Եթէ դարկրոսն մէջ. — 1. Արշակունեաց զա՛րը տապալեցաւ 429ին, և Հայաստան ընկաւ Պարսից լծին ներքև, որոց թագաւորը ուզեցին մեր արքայից իրաւունքն ալ սեպհականել հայրապետական ընտրութեանց մէջ։ Այդ նորութիւնը սկսաւ հետեւեալ կերպով։ Ս. Սահակ երբ ընդդիմացաւ Արտաշիսի զահրնկեցութեան, զոր կը պահանջէին մեր նախարարը, աւետիկ գնացին մատնել արքայն, հայրապետն ու հայրենիքը՝ Պարսից, Վրաս ազգիս երկու գլուխներն իւր դուռը կոչեց, և պահանջեց կաթողիկոսէն հաւանիլ Արտաշիսի անկման։ Երբ նա մերժեց, «այս նուհետև հրաման տայր վաղվադակի ի բաց առնուլ զթագաւորութիւնն յԱրտաշիսէ. ընդ նմին և զտունն կաթողիկոսաւ կան ի սրբոյն Սահակայ յարքունիս ունել»։ Նախարարը կանխաւ խոստացեր էին սրբոյն աթոռն արծկեցի Սուրմակ երիցուն, և իրենք իսկ «նստուցին զնա յաթոռ կաթողիկոսութեան Հայոց»։ Քիչ յետոյ իշխաններէն ոմանք անոր զէմ դարձան, և իրենց անմիաբանութեան վիրջ տալու համար՝ «խնդրեցին այնուհետև իւրեանց . . . յարքունուստ կաթողիկոս, և թագաւորն Վրաս ետ նոցա զիրքիւր զոմն անուն, ասորի՛ յազգէ այր»։ Քրիստոնեայ աթոռի մ'ընտրութիւնը վատարար հեթանոսի մը շնորհուած։ Մատնիչները յետոյ զգուշելով ասորոյն անբարոյ ընթացքէն, «խոտեալ մերժեցին զիրքիւրն ի քահանայապետութեանէն Հայոց, ծանուցանելով թագաւորին Վրասայ», և ուրիշ մը իւնդրելով անոր տեղ։ Արքայն «հաւանեալ կամաւ ինդրոյն նոցա, տայր նոցա դարձեալ կաթողիկոս այլ ասորի, որում աւետուն էր Շմուէլ»։

Ըստ իս' հոս պէտք է փնդուել պարսիկ միջամտութեան ծագումը, և դժուարին է

1. Փաւս. 104, 48. — 2. Այաթ. 596-602, 612-18, — 3. Փաւս. 29-30. — 4. Նոյն՝ 44, 45. — 5. Նոյն՝ 71-73. — 6. Ղ. Գաղաթիկ, Վեհաթիկ, 1873, 64-69, 70, 72-74.

հաւատաւ խորնացւոյն, որոյ համեմատ
Շապուհ Գ մեր խոսքով Գ թագաւորը
զահագրկելու ժամանակ՝ զս. Սահակ ալ
զվրդովեց՝ պատուէն, որպէս թէ Հայոց
արքային յանցանաց մին եղեր է՝ «յան»
հրաման կարգել յեպիսկոպոսութիւն զմեծն
Սահակ՝ ։ Բայց խոսքովս գործը շարու
նակութիւն էր հնոյն, որոյ փոփոխու-
թիւնը չէ յիշուած մինչև իւր օրերը. և
Փարպեցին ալ չի գիտեր Շապուհոյ պա-
հանջը, և ոչ Սահակայ հրամարկումը,
երբ կը պատմէ խոսքովս զահագրկու-
թիւնը՝, Միանգամայն Սահակ կը շարու
նակէ հովուել միշտ, առանց յիշուելու
խորենացիէն իւր վերստին հաստատու-
թիւնը պաշտօնին մէջ։

2. Պարսից շնորհած երկու կաթողի-
կոսներէն տաղտկացած՝, մեր իշխանը ջա-
նացին, այնուհետև ի գործ դնել իրենց
աւանդական իրաւունքն ընտրութեան մէջ։
Արդէն երկու ասորիքը «հակառակաթոռ»
համարուեցան արքայն՝ Հայոց կողմանէ՝,
այնպէս որ յետ հանգստեան արքայն՝ Մաշ-
թոց անոր տեղը կ'անցնէ, «և զվերական-
ցութիւնն սրբոյ եկեղեցւոյ շնորհօքն Աս-
տուծոյ առանց պակասութեան տանէր»
մինչև վեց ամիս, ուր և վախճանեցաւ։
Եւ հող չկայ արքայից արքային հրամանը.
այլ կը համարիմ՝ թէ զինքն ընտրեցին այդ
պաշտօնին վճարն Ամատունի հազարա-
պետն և աւագանին, որոնք յետ մահուան
վարդապետին եւս կը պատմուին «վերա-
կացու տեղապահ յայտ արարեալ Հարցն
կատարելոց» զՅովսէփ⁸, որ տեղապահու-
թեամբ սկսաւ ու կաթողիկոսութեամբ վեր-
ջացուց՝ առանց օւրիշ ընտրութեան։ Ուղ-
ղակի կաթողիկոս ընտրեցին Հայր և զգ-
րիւս, յայտնի Պերդդի խօսքէն՝ թէ «մին-
չև ցայժմ քո իշխանութիւնը առանց իմ
հրամանի կալեալ է, և ծառայ մարդիկ
են՝ որոց քեզ զայդպիսի մեծ գործ տուեալ
է, և ոչ ինչ յինչն ունիս վատահութիւն»։

Եւ երբ մերժեց արքային պահանջած տա-
րացութիւնը, նա վճռեց. «կաց ուր և
կամիս. ըսցաւ ի գործոյ կաթողիկոսութեան
թեան հետեւ եւ և չէ քո՝»։ Այդպէս ալ
եղաւ. սակայն գիտեալու ենք՝ որ անոր
շնորհագրկութեան մէջ ուրացող հայ իշ-
խանաց մատը կար՝, ինչպէս պատահեցաւ
և ս. Սահակայ, Ապա թէ ոչ՝ Պերդդ չոր
չէր իմանար անոր կաթողիկոսութիւնը,
որուն անհրաման լինելուն աչք գոցած էր։

3. Միւստ Բագրատունին՝ մարզպան
Վրկանայ, 607ին տեսնելու կու գայ իւր
հայրենիքը, զոր կը սիրէ միշտ, իւր որով-
հետև շատ ալ հաւատարիմ է իւր տիրոջ՝
Պարսից արքային, զայն յառաջ հրաման
կը խնդրէ շինել Գունի ս. Գրիգոր եկե-
ղեցին, և ընտրել Մովսէս եղիվարդեցւոյն
յաջորդը՝ Հագրու հասած՝ «առնէ, խնդիր
վասն թոռոյն մեծի, զի կարգեցնեն ի
վերայ նորա տեսուչ խնամող եկեղեցւոյն
և առաջնորդ փրկութեան իւրոյ. և նշու
տուցին զԱբրահամ զԽշառնեանց եպիսկո-
պոսն յաթոռ հայրապետութեան»։ Կար-
գեցնել, նախնիք. որոնք՝ յայտնի չէն
ինք կ'երևի թէ զուր կը մնայ, ինք
պաշտօնն օտար երկիր լինելուն համար։

Թորոց գիրքն ունի «կատնոց» և «Զեռ-
նարկ» վերնագրերով երկու դաւանական
գրուածքներ⁹, որոց առաջնոյն գլուխը կը
կարդանք. «Կատնոց որ եղան ի Գունիս
(606ին), մինչդեռ մտածութիւն էր ժողո-
վելոյ եպիսկոպոսացն՝ կարգել կարողիկոս
Հայոց յետ մահուանն Մովսէսի կաթոս-
դիկոսի. և խափանեցան այնմ առգամ»։
Բայց բնագրին մէջ կաթողիկոսական խըն-
դիրն ոչ միայն չէ յիշուած, այլ կ'ըսուի՝
թէ տեսնելով՝ որ շատերը յարած էին
քաղկեդոնականաց, «վասն որոյ ժողովե-
ցաք եպիսկոպոսքս այս և ս. հաստատեց
սահմանս կանոնականս յաղագաւ տխրել-
անցն»¹⁰։ Արեւմտ ժողովիդ Գումարաւ
բուն նպատակը կրօնական էր, ոչ ընտրաւ

1. Խորեն. Գ. 3. — 2. Փարպ. 82-83. — 3. Դոյն՝
75. — 4. Խորեն. Գ. 4ր. — 5. Կորեւն, Վնեմեթի,
1488, 26. — 6. Դոյն՝ 27. — 7. Փարպ. 346-50. —

8. Դոյն՝ 841-42. — 9. Սերբու, Կպուխ, 1851, 102.
— 10. Գր. Բորոց, 146, 149. — 11. Անդ՝ 146-47.

կանն իսկ միւսին վերնագրերն է. «Զեռու
նարկ՝ զոր խնդրեալաց Սմբատ Վրկան
մարզպան ցալն եպիսկոպոստան, որք դար-
ձեալ ժողովեցան նորին հրամանաւ ի Դուին
(607ին), կարգել կարողիկոս Հայոց՝ յետ
մահուան Մովսէսի. և զայս ձեռնարկ ետ
նոցա»։ Ասոր ընագրին մէջ եւս չկայ
ակնարկութիւն ընտրութեան. այլ կ'ըսեն՝
թէ «յայս եպիսկոպոսաց ... որ ի ժամոռս
ի Դուին ի սուրբ կկեղեցուց զիպաք՝ ձեռ-
նարկ խնդրեցէք վասն սուրբ և ուղղա-
փառ հաւատոյ»։ Կը հետեի՝ որ այդ զոյգ
վերնագրերը, որոց մէջ կ'ակնարկուի հայ-
րապետական ընտրութեան՝ կատարելի ե-
պիսկոպոսաց ժողովէն, նոյն մատենին միջ-
նադարեան խմբագրողին շարադրածներն
են, պատմական երկարաբան ձեւէն ալ
յայտնի, և ընտրական եղանակն իւր դա-
րու զազափարին արձագանգը կը թուի։

Բայց ստոյգ է՝ որ նոյն մարզպանի
օրերուն կը սկսի նաեւ երեւիլ եպիսկո-
պոսաց մասնակցութիւնն իշխանաց՝ կա-
թողիկոսի ընտրութեան մէջ։ Երբ 591ին
Մովսէս եղիվարդեցին բաժնուեցաւ Եկե-
ղեցիէն, քաղկեդոնական Հայք ուզեցին
իրենց զատ հովուապետ մ'ունենալ, կ'ըսէ
Յովհան մայրապետեցին՝ որ կ'ապրէր Է-
գարուն։ Այն ժամանակ Կարնոյ եպիսկո-
պոսը թէոդորոս «եռ հրաման ծաղովել
եպիսկոպոսացն Հայոց որ ի նորայն կող-
մանն՝ ի Կարնոյ քաղաք, և ասէ. Պարտ
է մեզ առնել կաթողիկոս։ Եւ ամին ըզ-
Յովհան ոմն սրինական, ձեռնադրեցին և
հնազանդեցան քաղկեդոնական կրօնիցն»։
Հոս ուրեմն զուտ եպիսկոպոսութիւնն է
ընտրող։ Չենք գիտեր՝ առաջին փորձն էր
այդ, թէ ուրիշներ ալ եղած էին արդէն։

Գալով միւս բաժանեալ կամ պարս-
կային կողման, Սեբէոս՝ որ կը գրէր նոյն
է գարուն, կը պատմէ՝ թէ յիշեալ Սըմ-
բատայ որդին Վարազդաբոց մարզպան
628ին դառնալով ուղեւորութենէն, թա-
փուր կը գտնէ հայրապետական աթոռը՝
կոմիտասայ մահուամբ. և խորհուրդ առ-
նէր ընդ ամենեցուն՝ տեսանել զոմն ար-
ժանաւոր։ Յայնժամ առաջադրութեամբ

թէոդորոսի Ռշտունեաց. տեսնէ ընտրե-
ցին»։ Չգիտատարբոր Բ։ Շարժողն ու ըն-
տրելին ցուցնողն իշխաններ են, այս ան-
գամ առանց հարցնելու Պարսից արքային
կամքը։ Իսկ որոնք «ընտրեցին» զայն՝
մութ կը մնայ հող, բայց յետոյ կը պար-
զուի։ Քրիստափորի ընթացքն ու սուր
լեզուն կը սարսուռեցանն զամէնքը. և յետ
երկու տարւոյ «ժողովեալ ամենայն եպիս-
կոպոստան և իշխան, արարին քննութիւն»,
յանցաւոր գտան, և «արձակեցին զմասն
յեպիսկոպոսաց անտի ... և ընկեցին զնա
ի կարգն և հալածեցին զնա անարգանքոյ
Եւ անդէն փութանակի նստուցին կաթու-
ղիկոս զԵզր ի Նիզ գաւառէն»։ Աւելի կամ
նուազ տարւոյ օրինակներէջ յայտնի է՝
որ մեր եպիսկոպոսական դասը Դ-Ե դա-
րերուն իրեն զլացուած իրաւունքը Զ
դարէն վայելիլ կը սկսի մասամբ, բաժ-
նելով մեր իշխանաց հետ, և շնորհիւ
ասոնց մէջ տիրող կրօնական նոր բար-
գաւաճման և նորակազմ հոգեբանութեան։

Այդ նորոգումը կամ կ'ընդհատուի, և
կամ աւելի հաւանօրէն կ'անգիտաւար
զայն Յովհաննէս պատմիչը, երբ Ներսէս
Շինողի համար կը գրէր՝ թէ 641ին «թեո-
դորոս Ռշտունեաց տէր և այլ նախարարք
Հայոց հանդերձեցին կացուցանել յաթոռ
հայրապետութեան փոխանակ Եղբի»։ և
նա վախելով այդ պաշտօնէն՝ փախաւ. և
«ապա յողորական բանից և ի սաղրելոյ
նախարարացն հնազանդեալ հանդարտիւր»
և յանձն կ'առնուր¹. Հոս եպիսկոպոսունք
դարձեալ կ'անյայտանա. իսկ Սեբէոս
փոխանակ այդ անագան տեղեկութեանց՝
կը շատանայ ըսելով՝ թէ «յալորդեցաւ»
Ներսէս աթոռը²։

Մեր իշխանք երբեմն աւելի յառաջ ալ
կ'երթան իրենց վարմանց մէջ հայրապե-
տութեան հետ։ Յովհաննէս ովայեցի, ըն-
տրուած 833ին, իւր թշնամիներն ունէր,
որոնք կը պղտորեն բազարատ Բագրա-
տունի իշխանաց իշխանի միտքն անոր

1. Մով. Կաղակատ. Մովսէս, 1860, 212. — 2.
Սեբէոս, 153-54. — 3. Յովհ. Կեղ. Երզն. 1867, 106.
— 4. Սեբէոս, 172.

մասին, և նա «զրէ հրովարտակ առ ամե-
նեան» ի բաց կալ յընդունելոյ զօտա-
պետն, ի մտի եղեալ այլ ևս կացուցանել
հայրապետ ըստ իւրումն ձեռնբրիցու-
թեան»։ Կաթողիկոսը կը բանադրէ իշ-
խանը, և կ'երթայ կը ծածկուի Այրի-
վանից լոռութեան մէջ։ Սմբատ սպարա-
պետ, Գրիգոր Սիւնի և միւս նախարարք
լսելով զայդ, կը վրդովին, և «համագունդ
ի միասին եկեալը, և ժողով նպիկոպոսաց
արարեալ», կը ստուգեն հայրապետին
տնմեղութիւնը, և «հաստատեն դարձեալ
յաթոռն սրբութեան զայլն Աստուծոյ»։
Հոս իշխանը և նպիկոպոսները վերստին
խառն են։

4. Եւ ի դարերուն մեր իշխանք փոքր
ի շատէ վայելելով Պարսից համակրու-
թիւնը, յաջողեցան իրենց պահել հայ-
րապետական ընտրութիւնը, կամ անոր
մէջ իրենց ունեցած բաժինը, ինչպէս նը-
կատեցին, Բայց արարական բռնութիւնը,
որ է դարէն յաջորդեց պարսկական լծին,
վերստին ցնցեց ազգին իրաւունքը, իւր
աւերիչ և ապականիչ ձեռքը միեւրով նաեւ
այս խնդրոյն մէջ։ Իժմախտարար մեր բա-
ւական օրինակներ չունինք այս շրջանին
ընտրութեանց, որպէս զի կարեանք ընդ-
հանուր հետեանքներ հանել։ Ահա ինչ որ
պատմութիւնը կ'աւանդէ։ Սուլիման ոստի-
կանը՝ կար, որ մեծ վստահութիւն ունէր

Աղմեկաց Սիւնի նպիկոպոսին սրբութեան
վրայ։ Երբ Տրդատ Բ վախճանեցաւ, «իմա-
ցեալ ոստիկանն» վաղվաղակի առաքէ ի
խնդիր նպիկոպոսին Սիւնի, և ամենալ՝
կացուցանել զնա հրամայէ յաթոռ հայ-
րապետութեան» 767 թուին, ինք կը
նշանակէ ընտրելին և Հայք կ'ընդունին՝
ըստ վկայութեան անագան պատմչին, որոյ
տեղեկութիւնը թէ ուստի՝ էր՝ յայտնի չէ։

Սակայն աւելի մերձաւոր է իւր զրաժի-
ր Աւոնդ, որ կը պատմէ Դունի հրամատար
Սիւնիցայի համար՝ թէ կը կողոպտէր եկե-
ղեցիներն իրենց բոլոր զանձերէն։ Յետոյ
կը դարձնէ զանոնք մասամբ, «մինչև յա-
ջորդել յաթոռ հայրապետութեան զՍտե-
փանոս (Ա, 788ին), որ բազում կաշառօք
յաջորդեալ ի հայրապետութեանն աթոռ,
վատնեաց զամենայն ինչս և զստացուա-
ծոս, մինչև եղև թողութիւն գիւղից և
ծառայից և պարտուց»։ Պէտք է իմանալ
թէ Ստեփանոս չյաջողեցաւ թոյլտուու-
թիւն ստանալ բազմելու հայրապետակա-
նութիւնը, մինչև որ չլիցցուց ազահ արա-
բացոյն որկորը, և ազատեց երկիրն ալ՝
փրկանք տալով անոր։ Արաբացիք միայն
կաշառի լեզուն կը հասկանային։

(Շարունակելի)

Հ. Վ. ՀԱՅՈՒՆԻ

1. Յովհ. Կէր. 147-48. — 2. Նոյն՝ 136. — 3.
Ղևոնդ, Պետրոք. 1887, 170.

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ ԼՈՅՍ ՏԵՍԱՎ Է ՀԱՅՈՅ ՀԱՅՐԻԿ

Ա. ՀԱՅՈՐ

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

ԳՐԵՑ ՀԱՅԿ ԱՃԵՄԵԱՆ

ԳԻՆ ՖՐ. ԵՕ. — ՏՈՒ. Զ. — ԵԷԼ. 9

Հասցէ՝ *Haik Adjémian* TAURIS
PERSE